## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
### ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**
**17.05.2024թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 26 անդամները, բացակայում է՝ Անահիտ Խեչոյանը :

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

***Համայնքի ղեկավարի առաջին փեղակալ Ս.Վարդանյանը, աշխափակազմի քարփուղար Ս.Մուրադյանը, համայնքապեփարանի աշխափակազմի բաժինների պեփեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը:***

Նիստը սկսվելուց առաջ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը հայտարարեց, որ նախապես ներկայացված օրակարգից հանվում է «Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին» նախագիծ N 56-ը:

***Նիսփը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար_Հ. Շահգալդյանը:***

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>***

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի օրակարգը՝ փոփոխված տարբերակով:

1) Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
5) Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 103-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

6) Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին:
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի աղբահանության սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարական պլանը հաստատելու մասին:
8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը հաստատելու մասին:
9) Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11 և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի, ավտոկայանատեղի և հասարակական նշանակության հատվածամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:
10) «Սաքշին» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի տարածքում Գյումուշի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:
11) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 10 Ա շենք թիվ 4/1 հասցեում գտնվող գույքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
12) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի թիվ 26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
13) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
14) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

*Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝*

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

**Կողմ- 15** **դեմ - 0** **ձեռնպահ -11**

*Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:*

*Լսեցին.*

***1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:***

*/Զեկ. Գ.Աֆյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

**/հազ. դրամ/**

| Տողի N | եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* |
| 3. | Հողի օտարումից մուտքեր | 8411 | 351586,662 | 0 | 5024,1 | 356610,762 |

**/հազ. դրամ/**

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 5113 | 36364,68 | 0 | 5024,1 | 41388,78 |

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-24** **դեմ-0** **ձեռնպահ-2**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

*Լսեցին.*

***2. Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. *ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 1810.0 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝*

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 01 | 01 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ | 4269 | 0 | 100.0 | 0 | 100.0 |
| 09 | 01 | 1 | Նախադպրոցական կրթություն | 4511 | 467544,0 | 910,0 | 0 | 468454,0 |
| 09 | 05 | 1 | Արտադպրոցական կրթություն | 4511 | 329943,0 | 800,0 | 0 | 330743,0 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

***Լսեցին.***

***3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:***

***/Զեկ.Ա.Զաքարյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 5-րդ թաղամասի 1-ին շենքի 21-րդ բնակարանի բնակիչ Սիրանուշ Խոջայանի 2024 թվականի ապրիլի 25-ի թիվ 2186-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 10ա-րդ շենքի 38-րդ բնակարանի բնակիչ Անժելա Ապրեսյանի 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 2187-16, Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 8-րդ փողոցի 1 փակուղու 11-րդ տան բնակիչ Զարուհի Դավթյանի 2024 թվականի ապրիլի 29-ի թիվ 2185-16, Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի 16-րդ փողոցի 1-ին տան բնակիչ Վարազդատ Ավդալյանի 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 1885-16, Չարենցավան համայնքի Արզական գյուղի Բաբաջանյան փողոցի 24/4 տան բնակիչ Ռոմիկ Մելիքյանի 2024 թվականի մայիսի 7-ի թիվ 2225-16 և Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 34 շենքի, 9-րդ բնակարանի բնակիչ Հայկուշ Ափոյանի մայիսի 8-ի թիվ 2292-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել Սիրանուշ Արամի Խոջայանին:
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729«Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել Անժելա Ջավադի Ապրեսյանին :
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել Վարազդատ Սպարտակի Ավդալյանին:
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել Ռոմիկ Սամվելի Մելիքյանին:
5. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել Հայկուշ Ժորայի Ափոյանին:
6. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել Զարուհի Մնացականի Դավթյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան*՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:***

*/Զեկ. Ս.Վարդանյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 49 որոշման, ***առաջարկում եմ.***

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների:

| Հ/Հ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | ՀԱՍՑԵՆ | ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ | ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ | ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՑ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Երվանդ Կարապետյան | 3-12-40 | 11 500 000 | Սեփականություն | Անհատույց |
| 2. | Գոլյա Դանիելյան | 3-1-72 | 2 000 000 | Սեփականություն | Անհատույց |

2. Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամ Նարեկ Բաբայանը հարց բարձրացրեց նախագծում ներկայացված բնակիչ Երվանդ Կարապետյանի փաստաթղթերի անհամապատասխանության վերաբերյալ, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանը հարցի վերաբերյալ տվեց պարզաբանումներ:
Ավագանու անդամները որոշեցին առանձին քվեարկել նախագծի 1-ին և 2-րդ կետերին»

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշման 1-ին կետը՝

**Կողմ-14 դեմ-1 ձեռնպահ-11**

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշման 2-րդ կետը՝

**Կողմ-26 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/*

*Լսեցին.*

5. ***Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 103-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:***

*Զեկ. Ս.Մուրադյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 103-Ա որոշման 15.1-րդ հավելվածը լրացնել նոր 24-րդ տողով՝ հետևյալ բովանդակությամբ՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24. | Պոմպավար-փականագործ /Սեզոնային/ | - | -- | | 2 | 121000 | 0 | 0 | 242000 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի տնօրեն Արթուր Աբգարյանը ներկայացրեց ՀՈԱԿ-ում հաստիքների ավելացման անհրաժեշտության և դրանով պայմանավորված աշխատանքների արդյունավետ կատարելու մասին, ինչպես նաև պատասխանեց ավագանու անդամների այլ հարցադրումներին:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/*

**Լսեցին.**

***6. Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին:***

*Զեկ. Ս.Մուրադյան/*

***Ղեկավարվելով «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով՝ առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ ***«Հրաշք», «Հեքիաթ», «Զանգակ», «Ծիծեռնակ»,«Լուսաբաց», Բջնի, Ալափարս, Արզական*** գյուղերի մանկապարտեզների, ***«Արամ Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց», «Գառզուի անվան արվեստի դպրոց», Արզական գյուղի «Արվեստի դպրոց», Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց», «Քաղաքային գրադարան», «Մշակույթ»*** 2016-2018 թվականը ներառյալ, համայնքային սեփականություն համարվող արխիվացման ենթակա արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/*

***Լսեցին.***

***7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի աղբահանության սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարական պլանը հաստատելու մասին:***

*(Զեկ. Վ.Չիլինգարյան/*

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.4-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարական պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/*

***Լսեցին.***

***8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը հաստատելու մասին:***

***/Զեկ. Վ.Չիլինգարյան/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի, ***առաջարկում եմ.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/***

***Լսեցին.***

***9. Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11 և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի, ավտոկայանատեղի և հասարակական նշանակության հատվածամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:***

***/Զեկ. Ս.Բալաբեկյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» N 1325-Ն որոշման 28-րդ կետով, ***առաջարկում եմ.***

1. Տալ նախնական համաձայնություն Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11 և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի, ավտոկայանատեղի և հասարակական նշանակության հատվածամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը:
2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-1**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/***

***Լսեցին.***

***10. «Սաքշին» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի տարածքում Գյումուշի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:***

***/Զեկ. Ս.Բալաբեկյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» N 1325-Ն որոշման 28-րդ կետով, ***առաջարկում եմ.***

1. Տալ նախնական համաձայնություն «Սաքշին» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի տարածքում Գյումուշի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախատեսվող գործունեության իրականացմանը:

2 Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

«Սաքշին» ՍՊԸ-ի ներկայցուցիչը պատասխանեց ավագանու անդամներին հետաքրքրող, Գյումուշի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ բոլոր հարցերին:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-3**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***11. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 10 Ա շենք թիվ 4/1 հասցեում գտնվող գույքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:***

*//Զեկ. Բ.Բալբաբյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 10 Ա շենք թիվ 4/1 հասցեում գտնվող գույքը (41.1 քմ մակերեսով բազմաբնակարան շենքի առաջին հարկում գտնվող շինությունը) 5 տարի ժամկետով տարեկան 50000 ՀՀ դրամ վարձավճարով վարձակալությամբ տրամադրել՝ Այա Ոսկանյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Որոշում կայացվեց Չարենցավան համայնք Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 10 Ա շենք թիվ 4/1 հասցեում գտնվող գույքը (41.1 քմ մակերեսով բազմաբնակարան շենքի առաջին հարկում գտնվող շինությունը) ոչ թե վարձակալությամբ, այլ անհատույց տրամադրել բնակչին, հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիքի վիճակը :

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշման փոփոխված տարբերակը, որից բխում է նաև օրակարգային նախագծում  ևս 11-րդ  կետը՝փոփոխելու անհրաժեշտությունը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

3. Թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 10 Ա շենք թիվ 4/1 հասցեում գտնվող գույքը (41.1 քմ մակերեսով բազմաբնակարան շենքի առաջին հարկում գտնվող շինությունը) 5 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել, Այա Ոսկանյանին իր  հաշմանդամություն ունեցող երեխայի համար, որպես բնակելի տարածք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/*

*Լսեցին.*

*12. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի թիվ 26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:*

*/Զեկ. Բ.Բալբաբյան/*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի «Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին» թիվ 26-Ա որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Աննման Մաթևոսյանին պատկանող 07-019-0413-0098 ծածկագրով 1.678286 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հնդավոր տարածքից 0.29065 հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական հողատեսքի, իսկ 0.04935 հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել որպես ջրային հողատեսքի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/*

*Լսեցին.*

*13. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:*

*/Զեկ. Բ.Բալբաբյան/*

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները մրցութային կարգով տրամադրելու համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-25** **դեմ-0** **ձեռնպահ-1**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/***

***Լսեցին.***

***14. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի գումարման օրը սահմանելու մասին:***

*/Զեկ. Ս.Մուրադյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով , ***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի օր և ժամը սահմանել Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստի 2024 թվականի հունիսի 17-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 26** **դեմ-0** **ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/***

Նիստի օրակարգային հարցերը քվեարկելուց հետո Չարենցավան համայնքի ավագանին քննարկեց և միաձայն որոշեց՝ ուղերձով դիմել համապատասխան մարմիններին անձնագրային ծառայությունների մատուցումը կրկին Չարենցավան քաղաքում իրականացնելու խնդրանքով:

*Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝*

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մակինյան Վարդան
Մալխասյան Նորիկ
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Սահակյան Գառնիկ
Պալյան Գարիկ
Պապոյան Դավիթ
Պողոսյան Մնացական
Վարդանյան Նորիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

*Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան*------------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ